



Ինչու՞ են թույլ իմունային համակարգ ունեցող անձանց տրվում պատվաստման այլ խորհուրդներ

Միջին կամ խստորեն թուլացած իմունային համակարգ ունեցող մարդիկ (օրինակ՝ արյան քաղցկեղ ունեցող կամ քաղցկեղի որոշակի բուժում ստացող, օրգանների փոխպատվաստում կատարած և աուտոիմունային որոշակի հիվանդություններ ունեցող) հատկապես խոցելի են COVID-19-ի նկատմամբ: Նրանք ավելի հավանական է, որ կվարակվեն COVID-19-ով, քան նորմալ իմունային համակարգ ունեցող մարդիկ: Եվ եթե նրանք վարակվեն, ավելի հավանական է, որ ծանր կհիվանդանան և վիրուսը կփոխանցեն ուրիշներին:

Բացի այդ, թույլ իմունային համակարգ ունեցող որոշ մարդկանց մարմինը բավարար պաշտպանություն չի ստեղծում COVID-19-ի դեմ սովորական հիմնական շարքը ստանալիս:

Այդ իսկ պատճառով, միջին կամ խստորեն թուլացած իմունային համակարգ ունեցող մարդկանց տրվում են պատվաստումների վերաբերյալ այլ խորհուրդներ՝ օգնելու մեծացնել իրենց պաշտպանվածությունը: Ի հավելումս սրա, Evusheld կոչվող դեղը նույնպես խորհուրդ է տրվում միջին կամ խստորեն թուլացած իմունային համակարգ ունեցող մարդկանց՝ կանխելու COVID-19-ով վարակվելը (տե՛ս ստորև):

Քանի՞ դեղաչափ պետք է ստանամ

Դա կախված է Ձեր տարիքից և հիմնական պատվաստանյութի շարքից:

Հիմնական շարք

- **Եթե Ձեր հիմնական շարքը եղել է Pfizer կամ Moderna պատվաստանյութ,** Դուք պետք է ստանաք 3 դեղաչափ:
- **Եթե Ձեր հիմնական շարքը եղել է J&J պատվաստանյութ,** Դուք պետք է ստանաք J&J պատվաստանյութի 1 դեղաչափ, գումարած՝ Pfizer կամ Moderna պատվաստանյութի 1 դեղաչափ:
- **Եթե Ձեր հիմնական շարքը եղել է Novavax պատվաստանյութ,** Դուք պետք է ստանաք 2 դեղաչափ:

Խթանիչ դեղաչափեր

5 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդիկ: Դուք պետք է ստանաք աշևան (թարմացված) երկվալենտ խթանիչ*՝ COVID-19-ի Ձեր վերջին դեղաչափը (կամ հիմնական շարքի վերջին, կամ վերջին խթանիչ) ստանալուց առնվազն 2 ամիս հետո: Նշանակություն չունի, թե նախկինում քանի խթանիչ կամ որ տեսակի պատվաստանյութն եք ստացել:

- 6 տարեկան կամ ավելի բարձր տարիքի մարդիկ ստանում են կամ Pfizer-ի, կամ Moderna-ի աշևան խթանիչը:
- 5 տարեկան երեխաները կարող են ստանալ միայն Pfizer-ի աշևան խթանիչը:

*Եթե Դուք 18 տարեկան եք կամ ավելի բարձր տարիքի, Դուք կարող եք որպես խթանիչ ընտրել Novavax (միավալենտ) պատվաստանյութը Moderna-ի և Pfizer-ի թարմացված խթանիչների փոխարեն, եթե բավարարում եք հետևյալ բոլոր չափանիշները՝ Դուք չեք կարող





COVID-19-ի դեմ պատվաստում. հաճախակի տրվող հարցեր

ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

կամ չեք ուզում ստանալ իՌՆԹ խթանիչ, ԵՎ Դուք ամբողջությամբ ստացել եք հիմնական շարքի պատվաստումները, ԵՎ Դուք նախկինում երբեք չեն ստացել COVID-19 -ի որևէ խթանիչ:

6 ամսականից 4 տարեկան երեխաներ: Ոչ մի խթանիչ դեղաչափ թույլատրված չէ տարիքային այս խմբի համար:

Այցելեք *Պարզեք, թե երբ ստանալ խթանիչը* ինտերակտիվ էջ, որը գտնվում է CDC-ի՝ [ժամանակին ստացեք COVID-19-ի պատվաստանյութերը, ներառյալ՝ խթանիչները](#) կայքէջում՝ իմանալու համար, թե երբ կարող եք Դուք (կամ Ձեր երեխան) ստանալ մեկ կամ ավել COVID-19-ի խթանիչներ:

Հարցրեք Ձեր բժշկին, թե որն է Ձեր դեղաչափերը ընդունելու լավագույն ժամանակը՝ հիմնված Ձեր ընթացիկ բուժման ծրագրի վրա: Սա հատկապես կարևոր է, եթե պատրաստվում եք սկսել կամ վերսկսել իմունալոգիայի համակարգը ճնշող դեղորայքով բուժում:

Իմունալոգիայի անբավարարություն ունեցող մարդկանց առաջարկվող բոլոր հիմնական և խթանիչ դեղաչափերի վերաբերյալ տեղեկությունների համար տե՛ս Հանրային Առողջության Վարչության [COVID-19-ի դեմ պատվաստման ժամանակացույցը](https://ph.lacounty.gov/covidvaccineschedules) ph.lacounty.gov/covidvaccineschedules կայքէջում:

Ի՞նչ լրացուցիչ քայլեր պետք է ձեռնարկեմ ինքս ինձ պաշտպանելու համար

COVID-19-ի դեմ պատվաստվելուց բացի, կարևոր է նաև ձեռնարկել այլ քայլեր՝ Ձեզ COVID-19-ից պաշտպանելու համար.

- **Խոսեք Ձեր բժշկի հետ COVID-19-ը կանխարգելող դեղամիջոցների մասին:** Evusheld կոչվող դեղն այժմ հասանելի է՝ կանխարգելելու COVID-19-ով վարակվելը այն մարդկանց մոտ, որոնց մարմինը չի կարող ստեղծել բավարար պաշտպանություն միայն պատվաստանյութից: Այն տրվում է մեկ այցելության ժամանակ նստատեղի հատվածում 2 առանձին ներարկումներով: Այն կարող է ներարկվել 12 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց, որոնք կշռում են առնվազն 88 ֆունտ (pound): Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Մենդի և Դեղորայքի Վարչության (FDA)՝ [Evusheld-ի փաստեղի տեղեկատվական թերթիկը](#) հիվանդների/ծնողների համար:
- **Կրեք պաշտպանիչ դիմակ,** ինչպիսին է դեմքը լավ գրկող շնչառական միջոցը (respirator) (օրինակ՝ N95, KN95, KF94) կամ [կրկնակի դիմակը](#)՝ ավելի բարձր մակարդակի պաշտպանության համար: Հնարավորության դեպքում խուսափեք մարդաշատ փակ վայրերից կամ վատ օդափոխվող տարածքներից: Մանրամասների համար տե՛ս՝ ph.lacounty.gov/reducerrisk և ph.lacounty.gov/masks:
- **Խրախուսեք Ձեզ հետ ժամանակ անցկացնող մարդկանց, որպեսզի օգնեն պաշտպանել Ձեզ:** Նրանք [պետք է ժամանակին ստանան](#) COVID-19-ի դեմ պահանջվող պատվաստանյութերը, ներառյալ աշնան խթանիչ դեղաչափը (եթե 5+ տարեկան են) և ձեռնարկեն լրացուցիչ քայլեր՝ [նվազեցնելու COVID-19-ով վարակվելու](#) և այն Ձեզ փոխանցելու վտանգը:





Որտեղի՞ց կարող եմ ստանալ լրացուցիչ տեղեկություններ



Այս Հաճախակի տրվող հարցերը (ՀՏՀ) կամ COVID-19-ի դեմ պատվաստման այլ թեմաների վերաբերյալ ՀՏՀ-ները տպելու կամ տեսնելու համար սկանավորեք QR ծածկագիրը կամ այցելեք [COVID-19-ի դեմ պատվաստման ՀՏՀ-ներ](#) կայքէջ:

- [VaccinateLACounty.com](#)՝ ներառյալ [COVID-19-ի դեմ պատվաստման ժամանակացույցը](#)՝ գրաֆիկական պատկերներով, որոնք ցույց են տալիս յուրաքանչյուր դեղաչափի ընդունման ժամանակը և տեղեկություններ են տրամադրում այն մասին, թե [Ինչպես պատվաստվել](#):
- Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս CDC-ի՝ [COVID-19-ի դեմ պատվաստում՝ միջին կամ սուր իմունային անբավարարություն ունեցող անձանց համար](#) կայքէջը:
- Եթե հարցեր ունեք, խոսեք Ձեր բժշկի հետ:

